ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2017 թվականի **թիվ 187** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված տնտեսական օպերատորների ընդհանուր ռեեստրի մասին

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված տնտեսական օպերատորների ընդհանուր ռեեստրի ձեւը.

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված տնտեսական օպերատորների ընդհանուր ռեեստրի ձեւավորման եւ վարման կարգը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 180 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի դեկտեմբերի 19-ի
թիվ 187 որոշմամբ

ՁԵՎ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների
լիազորված տնտեսական օպերատորների ընդհանուր ռեեստրի

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների
լիազորված տնտեսական օպերատորների ընդհանուր ռեեստր

Երկիրը, որի մաքսային մարմնի կողմից տրվել է ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու մասին վկայականը (այսուհետ՝ վկայական)	Վկայականի մասին տեղեկությունները					
	իրավաբանական անձին ռեեստրում ընդգրկելու ամսաթիվը	վկայականի համարը	վկայականի տիպը	վկայականն ուժի մեջ մտնելու ամսաթիվը	վկայականի գործողության կարգավիճակը	վկայականի գործողությունը կասեցնելու ամսաթիվը
1	2	3	4	5	6	7

Տեղեկություններ լիազորված տնտեսական օպերատորի (իրավաբանական անձի) եւ դրա առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումների (մասնաճյուղերի) մասին					
լրիվ անվանումը	կրճատ անվանումը	հարկային համարը	գտնվելու վայրը	փաստացի հասցեն	մասնաճյուղի հատկանիշը
8	9	10	11	12	13

Տեղեկություններ լիազորված տնտեսական օպերատորի՝ օգտագործման համար նախատեսված կամ ապրանքների ժամանակավոր պահպանության համար օգտագործվող կառույցների, շինությունների (շինությունների մասերի) եւ (կամ) բաց հրապարակների (բաց հրապարակների մասերի) մասին (այսուհետ՝ պահպանության վայրեր)			Տեղեկություններ այն մաքսային մարմինների մասին, որոնց վերապահված է պահպանության վայրերի հսկողությունը	
			այն մաքսային մարմնի ծածկագիրը, որի գործունեության տարածքում է գրանցված պահպանության վայրը	մաքսային հսկողության գոտու համարը կամ դրա ստեղծումը հաստատող փաստաթղթի համարն ու ամսաթիվը
պահպանության վայրի անվանումը	պահպանության վայրի փաստացի հասցեն	Պահպանության վայրի մակերեսը (մ^2)		
14	15	16	17	18

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի դեկտեմբերի 19-ի
թիվ 187 որոշմամբ

ԿԱՐԳ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված տնտեսական օպերատորների ընդհանուր ռեեստրի ձեւավորման եւ վարման

1. Սույն կարգը մշակվել է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Մաքսային օրենսգիրք) 431-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան եւ սահմանում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված տնտեսական օպերատորների ընդհանուր ռեեստրի (այսուհետ՝ ընդհանուր ռեեստր) ձեւավորման եւ վարման կանոնները:

2. Ընդհանուր ռեեստրի ձեւավորումն ու վարումն իրականացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից (այսուհետ՝ Հանձնաժողով) էլեկտրոնային տեսքով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված տնտեսական օպերատորների այն ռեեստրների (այսուհետ համապատասխանաբար՝ անդամ պետությունների ռեեստր, անդամ պետություններ) տեղեկությունների հիման վրա, որոնց վարումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրի ձեւի մասին» թիվ 186 որոշմամբ:

Ընդհանուր ռեեստրը ներառված է Հանձնաժողովի ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների կազմում:

3. Ընդհանուր ռեեստրի ձեւավորումն ու վարումը ներառում են անդամ պետությունների ռեեստրների տեղեկությունների ստացումը, համակարգումը, արդիականացումն ու պահպանումը:

4. Ընդհանուր ռեեստրում ընդգրկվում են անդամ պետությունների ռեեստրների այն տեղեկությունները, որոնք ունեն «ՀՏ» (հանրային տեղեկություններ) նշումը:

5. Անդամ պետությունների ռեեստրների տեղեկություններն ընդհանուր ռեեստրը ձեւավորելու նպատակով Հանձնաժողով են ներկայացվում անդամ պետությունների՝ մաքսային գործի ոլորտում լիազորված պետական մարմինների կողմից (այսուհետ՝ անդամ պետությունների լիազորված մարմիններ):

6. Անդամ պետության լիազորված մարմինը սույն կարգի 4-րդ կետում նշված տեղեկությունները Հանձնաժողով է ներկայացնում հետեւյալ դեպքերում.

ա) անդամ պետության ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու մասին վկայականն ուժի մեջ մտնելը. տեղեկությունները նշվում են վկայականն ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ.

բ) անդամ պետության ռեեստրում իրավաբանական անձի ընդգրկման մասին վկայականի գործողության կասեցումը. տեղեկությունները ներկայացվում են ոչ ուշ, քան վկայականի գործողությունը կասեցնելու ամսաթվից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

գ) անդամ պետության ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու մասին վկայականի գործողության վերականգնումը. տեղեկությունները ներկայացվում են վկայականի գործողությունը վերականգնելու ամսաթվից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օր հետո.

դ) լիազորված տնտեսական օպերատորի հանումը անդամ պետության ռեեստրից. տեղեկությունները ներկայացվում են անդամ պետության ռեեստրից լիազորված տնտեսական օպերատորին հանելու ամսաթվից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օր հետո:

7. Հանձնաժողովը անդամ պետության ռեեստրի տեղեկությունները ստանալու ամսաթվից ոչ ուշ, քան 1 աշխատանքային օր հետո թարմացնում է ընդհանուր ռեեստրի տեղեկությունները՝ միաժամանակ անդամ պետությունների լիազորված մարմիններին (այդ թվում՝ անդամ պետության ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու մասին վկայական տված անդամ պետության լիազորված մարմինը) ավտոմատ կերպով տեղեկացնելով ընդհանուր ռեեստրում իրականացված թարմացման մասին:

8. Հանձնաժողովն ընդհանուր ռեեստրը հրապարակում է Եվրասիական տնտեսական միության տեղեկատվական պորտալում եւ բոլոր շահագրգիռ անձանց համար ապահովում է հասանելիությունը դրանում պարունակվող տեղեկություններին: